


Թամ և զուարթ կը դարձնեն զայն: Հե-
 թանոստական բոյր անդրիններ կը դնեն հոն,
 Արէան ու Պոսիդոնը, ու աստուածաշնչն-
 չական դէմքեր, Ագամն ու Եւան. ասան-
 ուհինգերորդ դարու քանդակագործները
 հոն կը շարեն իրենց քիչ մը ճշտած ու ի-
 րական մարմինները, տանուվեցերորդին-
 ները հոն կը պարզեն իրենց խոսովակոծ և
 կաշմբուռն ձևերը: Ռիկչիօ և Սանսովինօ
 հոն կ'աստիճանակարգեն իրենց սանդուղ-
 ներուն թանկագին մարմարիտները, իրենց
 արագէտքներուն շնորհագեղ քմայքը և
 նրբարուեստ կճածեփերը, զէն ու զարդ,
 ոստ ու ճիւղ, զարդալուր, քմածին ծաղիկ-
 ներ, չարաճճի այծեր, և ամբողջ յորդում
 մը բանաստեղծական տունկերու և զուարթ
 ու ոստոստուն կենդանիներու: Տեսակ մը
 երկչոտութեամբ և յարգանքով վեր կ'երնէ
 մարդ իշխաններու այս սանդուղներէն,
 ամէնալով տխուր սև զգեստին համար, որ
 հակադրութիւն կը յիշեցնէ բարեկաման մե-
 տաքսէ պճղնաւորները, զալմատական շքե-
 զաշուք զառքաշները, բիւզանդական խոյ-
 բերն ու մոյկերը, սինեօրական մեծօպել-
 չութիւնները, որոնց համար էին շինուած
 մարմարիտնեայ այս աստիճանները, և ա-
 նոնց ծայրը, յանկարծ իր դէմ կը գտնէ
 թինթօրէթի Ս. Մարկոսը, որ հին Սատուր-
 նոսի մը պէս օղին մէջ կ'առկախտի, եր-
 կու շքեղ կիներու հետ, Զօրութիւնն ու
 Արդարութիւնը, ընկերուհիները տօմի մը,
 որ անոնց ձեռքէն կ'ընդունի հրամանա-
 տարութեան և կոխի սուրբ: Սանդուղին
 զագաթը կը բացուին կառավարութեան և
 հանդէսներուն սրահները, ամէնքն ալ նը-
 կարներով զարդարուած. հոն, Tintoret, Ve-
 ronèse, Pordenone, փոքր Palma, Titien,
 Bonifagio, և քսան ուրիշներ, իրենց զուս-
 գործոցներովը կը ծածկեն պատերն ու կա-
 մարները, որոնց գծագրութիւնն ու զար-
 դարանքը յօրինած են Palladio, Aspetti,
 Scamozzi, Sansavino: Քաղաքին բովանդակ
 հանճարը հոս հաւաքուած է անոր զեղեց-
 կագոյն դարուն մէջ՝ հայրենիքը փառա-
 տրելու համար, անոր մեծութեան աս-
 տուածացումը տօնելով և յաղթութիւննե-
 րուն յիշատակարանը կանգնելով հոս: Աշ-
 խարհի մէջ այսպիսի յաղթանակի հանդէս
 չկայ բնաւ. ծովային պատերազմներ, նա-
 լեր՝ որոնք իրենց քիթը հակած են կա-

րագներու վիզին պէս, խիտ թրակներով
 ցուանաւեր, պարսպատամներ՝ ուսկից նե-
 տերուն տարափը կ'իջնէ, կայմերուն մէ-
 ջերը ծփացող գրօշներ, ժխորալից խառ-
 նուրդներ կուռղներու, որոնք իրարու կը
 զարնուին ու կ'ընկղմին. իլլիրացի, Սարա-
 կինոս, յոյն խուժաններ, արեւէն արոյրի
 գոյն առած և մարտնչումներէն ջղապիրկ
 մարմիններ, ոսկեճամուկ կերպասներ, դա-
 մասկինուած զէն ու զրահներ, մարգարի-
 տով աստղացանուած մետաքսներ, ամբողջ
 տարօրինակ խառնամտունութիւնը այն զիւ-
 ցազնական փառաշուք պերճութիւններուն՝
 զորս այս պատմութիւնը պարտացուցած է
 Զարայէն մինչև Տամիէզ, Բատուայէն
 մինչև Տարտանէլ. հոս ու հոն՝ Pardenone ի
 Առաքինութիւնները, տեսակ մը հերակղէս-
 եան մարմինի հակայական մեծութեամբ
 արիւնախանձ ցասկոտ առնակիներ. ամեն-
 ուրեք ցուցադրում առնական ոյժի, զգու-
 յապաշտ հանձքի, և, իբր մուտք այս
 շրջուցի թափօրին, արդի պատկերներուն
 ամէնէն խոշորը, Tintoret ի Արխայոքիսն մը,
 ութսուն օտք երկարութեամբ և 24 օտք
 բարձրութեամբ, ուր վեցհարիւր կերպա-
 րանքներ կը պտուտքին կարմրափայլ լոյսի
 մը մէջ, որ հրդեհի բոցաշող ծուխին կը
 նմանի:

Թրգմ. Գ. Ի. Թէն
 Շարունակիչի



ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՕՍԳ

Ով որ ինկզիմիք զերի կ'ընկ ստրեան,
 կը կորսնցնի անկն հեղինակութիւն իր խօսի-
 րուն մեջ, և հաւասարապէս ասելի կ'ըլլայ
 Աստուծոյ և մարդոյ:

*

Ստրիւնը ի յայտ կը բերի սկար հոգի
 մը, անսպասելի միտք մը և յոռի նկարագիր մը:

*

Այն որ առաջինատե կը կարծի իր անօր,
 պարսի այնպիսի ճշդապան ըլլալ իր թոշոր խոս-
 տմունքուն մեջ, որ իր խօսքը լոկ՝ ապահո-
 վագոյն համարուի քան ուրիշներու երդումը: